

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՑԱԽ ՏԵՂԱՆՈՒՆԸ

(Համալիր ստուգաբանության փորձ)

### Վ. Գ. ՄԱՐԳՍՅԱՆ

Հատուկ անունների ստուգաբանությունը գիտական լեզվաբանության ամենաթույլ կողմերից մեկն է: Հասարակ անունների դեպքում մենք գործ ունենք երկու ելակետային շափանիշների՝ հնչյունական կառուցվածքի և իմաստի հետ, որոնց անբաժանելիության սկզբունքն էլ ընկած է ցանկացած գիտական ստուգաբանության հիմքում: Հատուկ անունների, այդ թվում նաև տեղանունների պարագայում այս անբաժանելիության սկզբունքը խախտվում է, քանի որ շատ հաճախ հետազոտողները ստիպված են լինում հենվել միայն անվան հնչյունական կառուցվածքի վրա, իսկ իմաստային կողմը մնում է անորոշ: «Ահա թե ինչո՛ւ,— գրում է ակադ. Գ. Բ. Զահեկյանը,— հատուկ անունների դեպքում պետք է փնտրել այնպիսի փաստեր, որոնք նեղացնում են հնարավոր իմաստների շրջանակը, գտնել պատմական համապատասխան ապացույցներ, ամենամեծ զգուշություն ցուցաբերել լեզվաբանական ապացույցների, հատկապես հնչյունական անցումների օրինաչափությունը որոշելիս»<sup>1</sup>:

Հայտնի է, որ հատուկ անուններն առաջացել են հասարակ անուններից՝ կրելով իմաստի որոշ փոփոխություն (ընդհանրացում), ուստի խոսել որևէ տեղանվան ստուգաբանության մասին, նշանակում է վերականգնել դրա նախնական կոնկրետ իմաստը և ըստ հնարավորին ցույց տալ վերջինիս կապը տվյալ տեղանքի ֆիզիկական հատկանիշների հետ: Առհասարակ բոլոր կարգի տեղանուններից միայն ջրանուններն ու լեռնանուններն ունեն իմաստային որոշ սահմանափակում, որը սակայն խիստ հարաբերական է և մասամբ է նեղացնում իմաստային դաշտը: Գետանուններն, օրինակ, կարող են առաջանալ «արագահոս», «ջրառատ», «սակավաջուր», «կապույտ», «պղտոր», «սառըն», «քաղցր» և բազմաթիվ այլ իմաստներ նշանակող բառերից, իսկ լեռնանունների հիմքում կարող են ընկած լինել այնպիսի իմաստներ, ինչպիսիք են՝ «բարձր», «սրագագաթ», «կորագագաթ», «ժայռոտ», «անտառածածկ», «ճաղատ», «կարմիր», «ձյունածածկ» և այլն՝ շհաշված ժողովրդական բանահյուսության (առասպելաբանական) տարրերը, որոնցով շատ հաճախ պարուրված են լինում գետանուններն ու լեռնանունները: Անշուշտ, բավականին մեծաքանակ են նաև այնպիսի տեղանունները, որոնց իմաստն ինքնին հասկանալի է՝ Արծվաբերդ, Ուղտասար, Պառավաբար, Գանձասար և այլն: Սրբանց կողքին կան հսկայական քանակությամբ այլ տեղանուններ, որոնց նախ-

<sup>1</sup> Գ. Բ. Զահեկյան, Հայոց լեզվի պատմություն. Այսագրային ժամանակաշրջան, Երեվան, 1987, էջ 280:

նական իմաստի ընդհանրացումը տեղի է ունեցել շատ հին ժամանակներում, և այս հանգամանքն էապես դժվարացնում է ստուգաբանության գործը: Նման տեղանուններից են Կամախ, Արծկե, Հաբանդ, Վարանդ, Մասիս, Մեծամոր, Ակոռի և այլն:

Մի կարևոր հանգամանք ևս:

Առհասարակ լեզվաբանության մեջ ընդունված է բառերի և հատուկ անունների ստուգաբանությանը մոտենալ առանձին-առանձին: Այս սկզբունքը մի կողմից հիմնավոր է, քանի որ հնարավորություն է տալիս խուսափել խառնաշփոթից, սակայն մյուս կողմից սահմանափակում է ստուգաբանության շրջանակները՝ հաճախ տեսադաշտից դուրս թողնելով տվյալ բառի ստուգաբանությանն առնչվող բազմաթիվ ուշագրավ փաստեր: Հարկ է նկատի ունենալ նաև, որ լեզվի բառապաշարը, մասնավորապես հիմնաշերտը, բաղկացած է միմյանց հետ սերտորեն փոխկապակցված և զանազան ձևա-իմաստային համակարգեր ներկայացնող բառերից, որոնցից յուրաքանչյուրն անբաժանելի է ինչպես այդ համակարգից, այնպես էլ վերականգնվող նախալեզվի բառապաշարից: Այս սկզբունքից բացառություն չեն կազմում նաև տեղանունները. սրանք ձևավորվում են նախապես խիստ սահմանափակ իմաստային դաշտի հիման վրա, իսկ հետագայում ընդարձակվելով՝ վերածվում են մեծ համակարգի, որի բոլոր բնիկ բաղադրիչներն էլ միմյանց հետ այս կամ այն շափով փոխկապակցված են: Սրանից հետևում է, որ խոսել որևէ տեղանվան ստուգաբանության մասին, նշանակում է ցույց տալ դրա տեղը տվյալ տարածքի տեղանվանական համակարգում և ըստ հնարավորին մատնանշել կապը համանուն այլ տեղանունների հետ:

Մասնավորեցնելով մեր խոսքը Արցախ տեղանվան վրա, մենք կարծում ենք, որ գիտականորեն հիմնավորված ստուգաբանությունը շպետք է սահմանափակվի միայն Արցախ անվան նախաձևի և սկզբնական իմաստի վերականգնմամբ, այլ պետք է ամրապնդվի տեղանքի ֆիզիկական առանձնահատկությունների հաշվառումով, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում Արցախ անվանը համահունչ և հոմանիշ այլ տեղանունների առկայությամբ:

Ասենք նաև, որ ստուգաբանական վերականգնումներում մենք հենվելու ենք ոչ միայն հայերենի հնչյունական օրինաչափությունների, այլև հայերենի հետ մերձավոր առնչություն ցույց տվող բասկերենի, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում և Պիրենեյան թերակղզում զուգահեյպող տեղանվանական տարրերի վրա:

## 1. ԱՐՑԱԽ ՏԵՂԱՆՎԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ

Արցախ տեղանունն ավանդվել է տարբեր ձևերով՝ Արձախ, Արդախ, Արցախ, Արացխ և այլն<sup>2</sup>: Եթե շհաշվենք Արացխ տարբերակը, որն ականախորեն դրափոխության արդյունք է (Արցախ > Արացխ), ապա մեզ հարկ կլինի դործ ունենալ միայն երեք հիմնական ձևերի հետ՝ Արցախ, Արձախ և Արդախ: Հնչյունական կառուցվածքի տեսանկյունից սրանք կարող են գալ \*ար-դի-ախ նախաձևից, որի բուն իմաստը կլինե՞ր «չրառատ»՝ ար- «չուր», -դի «շատ» և ախ- «չուր»: Դիտարկենք այս երեք բաղադրիչներն առանձին-առանձին:

ա) Հնդեվրոպական նախալեզվում գոյություն է ունեցել \*ur պարզական արմատը՝ «չուր» իմաստով, որից ծագում են լատ. *urina* «մեզ», *urino* «չրի

<sup>2</sup> Հայաստանի և Ռարակից շրջանների տեղանունների բառարան (այսուհետև՝ ՀՀԾՏԲ), հ. 1, էջ 508:

տակ ընկղմել», հուն. *uron* «մեզ», հին իսլ. *ur* «բարակ անձրև, խոնավություն»: Հետազոտողները սրանց են կցում նաև հայ. ջուր, վեղ. *var*, սանս. *vari* «ջուր», սոգդ. *war* «անձրև», հին պրուս. *iuren* «ծով», լիտ. *jures* «ծով» և բազմաթիվ այլ ձևեր<sup>3</sup>:

Այս \**ur* «ջուր» արմատի ստորին ձայնդարձն է \**ar*, որը լայնորեն ներկայացված է հայերենում: Բերենք մի քանի օրինակ.

- առու «գետակ, վտակ»
- առոզ «աղբյուր, ռոտգիշ ջուր»
- առատ «շատ, լիքը, հորդ»
- արագ «շուտ, փութով»
- արած «վերքի, մանավանդ բորոտության նշան»
- արեկ «զորավոր, սաստիկ»
- արին «արյուն»
- արու «արու, որձ» (իմա՝ «հոսեցնող»):

Սրանցից *ա-*-ով տարբերակները ծագում են ար-ար կրկնավոր ձևերից ար-ար > արր > առ: Այսպես, առու բառը գալիս է \*ար-ար-ու նախաձևից, որի բուն իմաստն է «ջուր-ջուր ունեցող»։ \*ար-ար «ջուր-ջուր» և -ու «ունեցող» (հմմտ. հատ-ու, կծ-ու, քթ-ու և այլն): Համապատասխանաբար, արու «որձ» բառի նախնական իմաստն է «հեղուկ ունեցող, հոսեցնող»։ ար «ջուր» և-ու «ունեցող»:

Չնայած առատ բառին վերագրվող իրանական ծագմանը<sup>4</sup>, պետք է ասել, որ այն իր կազմությամբ հեշտությամբ ստուգաբանվում է հայկական տարրերով: Բառի նախնական ձևն է \*ար-ար-ատ «ջուր-ջուր ունեցող», որից էլ \*արրատ և առատ (-ատ «ունեցող» վերջածանցի համար հմմտ. փշ-ատ, «փուշ ունեցող», բաց-ատ «բաց տեղ ունեցող», կրճ-ատ «կարճություն ունեցող», կտաւ-ատ «կտավ ունեցող» և այլն):

Բացի \*ուր և \*ար ձայնդարձներից հ.-ե. \**ur* «ջուր» արմատն ունեցել է նաև \**er* տարբերակը, որից ծագում են հետևյալ հայերեն բառերը.

- երախ «բերան» (իմա՝ «ջրի անցք»)
- երակ «երակ, արյունատար անոթ»
- երագ «արագ»
- երեր-ալ «տատանվել, շարժվել»:

Հանդես գալով կրկնավոր ձևերում, առու բառի նման (ար-ար-ու), \*եր «ջուր» արմատը կարող է ենթարկվել որոշ փոփոխության: Մասնավորապես երերալ ձևում երկրորդ ե-ն կարող էր ընկնել, և մենք պետք է ստանայինք \*երրալ ձևը, որի երր բաղադրիչը պահպանվել է հայերենում՝ երր «փտություն, ապականություն, նեխություն» (հմմտ. ար ձայնդարձով կազմված արատ զուգահեռը), որը նույնպես կապված է «ջուր» իմաստի հետ: Հարկ է նշել, միաժամանակ, որ \*եր «ջուր-ջուր» կառուցվածքը իր զարգացման ընթացքում պետք է հանգեր եռ տարբերակին: Վերջինս ևս առկա է հայերենում և կրկին կապված է «ջուր» իմաստի հետ՝ եռ-ալ «եռալ, եփվել, պղպղջալ» և այլն: Այսպիսով, հայ. եռ-ալ բառն անցել է զարգացման հետևյալ ձանապարհը. \*եր «ջուր», երերալ «տատանվել, շարժվել», եռ-ալ «եփվել, պղպղջալ»:

Ինչպես ցույց կտրվի ստորև, հայերենը պահպանել է նաև \*ուր ձայնդարձը (հմմտ. մասնավորապես, որ-որ-ել «օրորել»), որն ընկած է \*ուր և \*ար

<sup>3</sup> Հ. Աճառյան, ՀԱԲ, հտ. 4, էջ 134:

<sup>4</sup> ՀԱԲ, հտ. 1, էջ 255:

ձևերի միջև: Հայերենում մեծաբանակ են հատկապես \*ուր «չուր» արմատով բառերը: Բացի վերը նշված ջուր բառից, կարող ենք նշել մի քանի օրինակ ևս.

- ուռ «ուռած տեղը, ուռուցք, պայար»
- ուռ «ճյուղ, ընձյուղ» («աճել, զորանալ» իմաստից)
- ուռնանալ «աճել, լցվել, մեծանալ, զորանալ»
- յուրթի «արգավանդ, ջրարբի»
- ուրախ «զվարթ, կայտառ»
- ուրդ (սեռ. ուրդի) «պարտեզները ջրելու նեղ առու» և այլն:

Սրանցից կոշտ ու ունեցողները ծագում են \*ուր-ուր կրկնավոր ձևերից՝ \*ուր-ուր > \*ուր > ուռ և լրացնում առ (<ար-ար) և եռ (<եր-եր) ձայնդարձների շարքը: Ստացվում է, որ հայ. առ-ատ, ուռ-ած և եռ-աճ ու բառերը միմյանց ձայնդարձ ու կրկնակ են և ձևավորվել են նախավոր «չուր» իմաստի հիման վրա:

Անվաժից կարելի է գալ այն եզրակացություն, որ Արցախ անվան \*ար բաղադրիչը նախկինում արտահայտելիս է եղել «չուր» իմաստը և \*եր, \*ուր ձայնդարձների հետ մեկտեղ լայնորեն ներկայացված է հայերենում:

բ) Արդեն ասվեց, որ Արցախ տեղանվան համար ենթադրելի է \*ար-դի-ախ նախասձևը: Սրա -դի բաղադրիչը նույնն է հայ. -տի (-դի) վերջածանցի հետ՝ իբրև հավաքական հոգնակերտ (հմմտ. մանկ-տի «մանուկներ», ծակ-տի «անցքեր» և այլն): Եվ եթե հայ. \*ար «չուր» արմատին ավելացնենք այդ -տի (-դի) «շատ» մասնիկը, ապա կստանանք \*արդի կազմությունը, որի իմաստը կլինի «շատ ջուր»: Մեր կարծիքով, այս \*արդի բաղադրիչն էլ ընկած է Արցախ անվան Արդախ տարբերակի հիմքում՝ \*արդի-ախ:

Բացի -տի «շատ» մասնիկից, հայերենում գոյություն ունի նաև տի-«մեծ» արմատը, որը հանդես է գալիս տի-կիճ, տի-եզեբ և այլ բառերում: Ակնհայտ է, որ -տի «շատ» և տի- «մեծ ձևերի միջև անձուկ կապ կա և, հավանաբար, մենք գործ ունենք միևնույն արմատական տարրի հետ՝ իմաստի աննշան փոփոխությամբ: Սրանից հետևում է, որ Արցախ անվան արդ (<ար-դի) բաղադրիչը կարող է մեկնվել ինչպես «շատ ջուր», այնպես էլ «մեծ ջուր»:

Այսպիսով, մենք եկանք այն եզրակացության, որ Արցախ անվան հին ձևը եղել է Արձախ, որն էլ առաջացել է \*ար-դի «շատ ջուր» կազմությունից՝ դ հնչյունի քմայնացմամբ՝ \*արդի-ախ > Արձախ: Հետագայում, վերջածայն ի-ի ազդեցությամբ, ձ հնչյունը կորցրել է իր ձայնեղությունը, որի հետևանքով Արձախ տարբերակը վերածվել է Արցախ-ի:

Ըստ էության, այսքանով կարող էինք ավարտել Արցախ անվան առաջին երկու բաղադրիչների (ար և տի) քննությունը, սակայն կան մի շարք այլ հանգամանքներ, որոնք հնարավորություն են տալիս էլ ավելի խորացնել ստուգաբանական վերականգնումները և առկա նյութը տեղավորել մեկ միասնական համակարգի մեջ: Արցախ անվան \*արդի «շատ ջուր» բաղադրիչը մինչև այս «չուր» արմատի հավելումը կարող էր գիտակցվել իբրև առանձին բառ՝ հենց «շատ ջուր» իմաստով: Այս դեպքում՝ սպասելի էր վերջածայն ի-ի՝ հայերենի համար շատ սովորական անկում, որով կստանայինք \*արդ «շատ ջուր» կազմությունը: Բացառված չէ, որ վերջածայն ի-ն պահպանվեր թեք հոլովաձևերում, եթե, իհարկե, այսպիսիք կան:

Այն, որ հայերենում, իրոք, գոյություն է ունեցել \*արդ(ի) տիպի մի կազմություն «շատ ջուր» իմաստով, հաստատվում է հետևյալ ձայնդարձային տարբերակներով.

— ուրդ «պարտեզները ջրելու առու» (ենթադրելի է \*ուր-դի «շատ ջուր» նախաձևը)

— յուոթի «արգավանդ, ջրարբի» (գալիս է ուր «ջուր» արմատի կրկնությունից՝ \*ուր-ուր > ուո-տի)

— ուոճանալ «աճել, լցվել, մեծանալ, զորանալ» (նախորդի քմայնացված տարբերակն է)

— յորդ «առատ, առատահոս» (վերականգնելի է \*ի-որ-դի նախաձևը)

— յորձ «ջրի առատ հոսանք» (նախորդի քմայնացված տարբերակն է)

— որձ (սեռ. որձի) «արու» (իմա՝ «հոսեցնող, առատ հեղուկ ունեցող»): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «շատ ջուր» իմաստն անբաժանելի է «ջրի հոսանք, ջրի բխելը, դուրս տալը» նշանակումներից, բերված բառաձևերին կարելի է ավելացնել նաև \*ար «ջուր» ձայնդարձով կազմված հետևյալ զուգահեռ ձևերը.

— արտ «դուրսը» (հմտ. արտախել, արտախին և այլն. ենթադրելի է \*ար-տի նախաձևը)

— արտորալ «շտապել, փութալ»

— արտour «արտասուք» (իմա՝ «հոսող ջուր»):

Բերված օրինակները ներկայացնում են ձայնավոր-բաղաձայն-բաղաձայն կառուցվածքը՝ ուրդ, ուրձ, արտ: Վերջինս, կապված բառապաշարի հարըստացման հետ, կարող է փոխվել բաղաձայն-ձայնավոր-բաղաձայն կառուցվածքի: Նման հնարավորութայն օգտին են խոսում, մասնավորապես, արտածել և տարածել հոմանիշները, որոնցում պարզական արտ (\*ար-տի «շատ ջուր») բաղադրիչը հանդես է գալիս երկու ձևով՝ արտ և տար: Այս երևույթը կոչվում է դրափոխություն (մետաթեզիս):

Արդ, եթե դրափոխության տեսանկյունից դիտարկենք հայ. բորել, սորել, ծորել հոմանիշները և իմաստով սրանց մերձավոր ծոր բառը, ապա կրտեսենք, որ դրանք բոլորն էլ գալիս են նախավոր ձայնավոր-բաղաձայն-բաղաձայն կառուցվածքից՝ կրելով կազմության և իմաստի աննշան փոփոխություն:

— Թոր-ել «ջրի պես վազելը». Համեմատելի է յ-որդ «առատ, առատահոս» հոմանիշի հետ՝ որդ > բոր անցմամբ: Ընդամին դ > թ հնչյունափոխությունը պայմանավորված է դրափոխությամբ, դ ձայնեղ պայթկանը հեռանալով ր ձայնորդից՝ խլացել է: Այս նույն օրինաչափությունն է նկատվում նաև որդի և բոռ-ն բառերում, որոնցից երկրորդն առաջինի դրափոխված ձևն է, իսկ սրանց մերձավոր ծոռն տարբերակը գալիս է որդի բառի քմայնացուսից՝ որդի > որձի, ծոր > ծոռ-ն:

— Մոր-ել «հոսել, վազել». նախորդի քմայնացված ձևն է և ենթադրում է \*որձ կամ \*որց նախաձևերից մեկը: Առաջինը որձ «արու» (իմա՝ «հոսեցնող») բառն է, իսկ երկրորդը պահպանվել է որց-ել «ցատկել» բայում:

— Մար-ել «ծորել, հոսել» (նաև սոր «անցք, խոռոչ»). Անշուշտ, կապված է նախորդների հետ և գալիս է որց-ել կազմությունից՝ որց-ցոր-սոր անցումներով:

— Ձոր «ցած, հովիտ, ծործոր, լեռների ստորոտում հեղեղատի անցք»: Ոչ այլ ինչ է, եթե ոչ որձ բառի դրափոխված ձևը՝ որձ-ձոր:

— Թոռ «թաց, խոնավ» (սրա հետ նույնն են նաև բուրմ, բրջել, բրել ձևերը): Դրափոխության օրենքով ծագել են յ-որդ բառից՝ յ-որդ > բոռ (հմտ. որդի > բոռ-ն):

— Թարմ «նոր» (հին իմաստը՝ «թաց, խոնավ»). Պարունակում է բար արմատական տարրը և նախորդի (բոռ, բոր) ստորին ձայնդարձն է. վերականգնելի է \*արդ (\*ար-դի) «շատ ջուր» նախաձևը:

Այսպիսով տեսնում ենք, որ Արցախ (<Արձախ) անվան ար «չուր» և -դի «շատ» («մեծ») արմատական տարրերն իրար միանալով և գիտակցվելով որպես ինքնուրույն բառ, հայերենում ստեղծել են կառուցվածքով և իմաստով մերձավոր բառերի հսկայական մի համակարգ, որի բոլոր բաղադրիչները փոխադարձաբար լրացնում են միմյանց և կազմում հայերենի բունիկ բառապաշարի մի շատ էական մասը:

գ) Արցախ տեղանվան -ախ բաղադրիչը հնդեվրոպական \*aqw «չուր» արմատի հայկական ժառանգորդն է: Որքան մեզ հայտնի է, հ.-հ. \*aqw—հայ. ախ համապատասխանության մասին առաջինը խոսել է Յոզեֆ Կարստը՝ բասկ. latz «թթու»— հայ. Բացախ («թթու ջուր») զուգահեռի կապակցությամբ<sup>5</sup>: Այս ենթադրության օգտին են խոսում նաև հետևյալ օրինակները

- բարախ (բար-ախ) «շարավ»
- շաղախ (շաղ-ախ) «ցեխ»
- յաճախ (յ-ան-ախ) «շատ, բազմաթիվ»
- յախուռն (յ-ախ-ուռն) «հանդուգն, բուռն»:

Հայկական լեռնաշխարհի գետանուններում ևս հայ. ախ «չուր» արմատը լայնորեն ներկայացված է, ինչպես օրինակ՝ Ախուրեան (հմատ. յախուռն), Ախտի (ախ-տի «շատ ջուր») և այլն:

Արդ, ամփոփելով վերոշարադրյալը, կարող ենք եզրակացնել, որ Արցախ տեղանվանը «առատաջուր» իմաստը վերագրելը հիմնավորված է ինչպես արմատական տարրերի, այնպես էլ դրանց կրած հնչյունական փոփոխությունների տեսանկյունից: Բերված փաստերը ցույց են տալիս, որ Արցախ տեղանունը զուտ հայկական կազմություն է, որի հիմնական բաղադրիչները (պարզական արմատները) գալիս են հնդեվրոպական նախալեզվից և պատկանում են հայերենի բառապաշարի հնագույն և առավել գործածական շերտերին:

## 2. ԱՐՑԱԽ ԱՆՎԱՆ ԿԱՊԸ՝ ՏԵՂԱՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Արցախ աշխարհը գտնվում է Մեծ Հայքում: Այն տարածվում է Սյունիքից արևելք, Կուր և Արաքս գետերի միջև՝ հյուսիս-արևմուտքում ձգվելով մինչև Աղստև գետի արևելյան ջրբաժան լեռները<sup>6</sup>: Հնուց ի վեր Արցախը հռչակված է իր հանքային ու սառնորակ աղբյուրներով: Առհասարակ Արցախի տեղանքը խիստ կտրտված է զանազան գետերով, մեծ մասամբ՝ Կուրի վտակներով, որոնցից մի քանիսն ունեն իրենց մեծ ու փոքր ճյուղավորումները: Այլ կերպ ասած, Արցախ աշխարհի հիմնական ֆիզիկական հատկանիշներից մեկը ջրառատությունն է, որը չի հակասում Արցախ անվան՝ մեր վերականգնած «առատաջուր» իմաստին: Սակայն հարկ է նշել, որ վաղնջական ժամանակներում Արցախ աշխարհը հազիվ թե գիտակցվեր իբրև աշխարհագրական մեկ ամբողջություն և ստանար «առատաջուր» իմաստով Արցախ անվանումը: Ամենայն հավանականությամբ, Արցախ տեղանվան հիմքում ընկած է եղել որևէ գետանուն հենց «առատաջուր» իմաստով, որն էլ հետագայում տարածվել է ողջ Արցախ աշխարհի վրա՝ ելնելով նաև վերջինիս ֆիզիկական առանձնահատկություններից:

Բերենք այս ենթադրությունը հաստատող մի շարք փաստեր:

ա) Արցախ աշխարհի ամենանշանավոր գետն է Թարթառը, որը հայտնի

<sup>5</sup> Alarodians et Proto-Basques, Vienne. 1928, p. 30.

<sup>6</sup> ՀՀՇՏԲ, հմ. 1, էջ 508:

է նաև Քարթառ, Քերթեր, Քուրթուր, Տուրտուր, Տրտու և այլ անվանումներով: Սրանք ակնհայտորեն կազմված են համապատասխանաբար քար և բուր արմատների կրկնությունից՝ Քար-քառ և Քուր-բուր: Այս ձևերը մեզ արդեն ծանոթ են նախորդ շարադրանքից և հեշտությամբ կարող են կցվել հայ. քար-մ և բուր-մ հոմանիշներին, որոնք, իրենց հերթին, \*արդ և \*ուդ նախաձևերի դրափոխված տարբերակներն են՝ «շատ ջուր» իմաստով: Այլ կերպ ասած, Քարթառ և Քուրթուր գետանունները բառացի նշանակում են «առատ ջուր—առատ ջուր»:

Հաշվի առնելով այն հանդամանքը, որ Քարթառը, թե իր մեծությամբ և թե տնտեսական նշանակությամբ, Արցախի ամենանշանավոր գետն է, կարելի է ասել, որ Արցախ անվան հիմքում, վերջին հաշվով, ընկած է հենց Քարթառ գետանունը: Եվ ինչպես որ Քարթառ գետանունն է պարունակում «ջուր» իմաստով երկու արմատ՝ \*արդ(ի)—արդ(ի) «շատ ջուր—շատ ջուր», այնպես էլ Արցախ անվան մեջ է նշմարվում «ջուր» իմաստով երկու հոմանիշ արմատների առկայությունը՝ \*ար և \*ախ:

բ) Քարթառ գետի ձախ ափին է գտնվում հռչակավոր Մար ավանը, որի անվան մեջ, վերը բերված պարզաբանումների լույսի ներքո, դժվար չէ տեսնել Արձախ անվան արձ (<ար-ձի «շատ ջուր») բաղադրիչի դրափոխված տարբերակը՝ արձ>ժար:

գ) Մար անունով հայտնի է նաև Արցախի գավառներից մեկը, որը տարածվում էր Քարթառ գետի վերին հոսանքի շրջանում: Մար գավառն իր անունը ստացել է Մար ավանից<sup>7</sup>: Ուշագրավ է, որ Մարի մոտակայքում գրտորնվող այլ տեղանուններում ևս առկա է «ջուր» իմաստը՝ Զրաբերդ, Գետամեջ և այլն:

դ) Արցախից մի փոքր հարավ-արևելք ընկած է Մոբժուր գետը, որը Արաքսի վտակներից մեկն է և սկիզբ է առնում Իշխանասարի լանջերից<sup>8</sup>: Ամենայն հավանականությամբ Մոբժուր գետանունը ծուր «ծորել» արմատի կրկնությունն է և նախորդ՝ Մար անվան ձայնդարձը:

Բերված փաստերից արվելիք հիմնական եզրակացությունն այն է, որ Արցախ-ը սկզբնապես եղել է գետանուն և ձևավորվել է Քարթառ գետանվան քար տարրի հիման վրա, ընդ որում այդ ձևավորումը տեղի է ունեցել շատ հին ժամանակներում, երբ քար բաղադրիչն ուներ \*արդի (ձայնավոր-բաղաձայն-բաղաձայն) կառուցվածքը և դեռ չէր ենթարկվել դրափոխության՝ արդ>քար—Քարթառ: Հետագայում \*արդ(ի) «շատ ջուր» տարրի վրա ավելացել է ախ «ջուր» արմատը, և ստացված Արդախ և Արձախ ձևերը անճանաչելիորեն հեռացել են Քարթառ գետանունից:

### 3. ԱՐՑԱԽ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հետազոտողներից ոմանք Արցախ անունը կապել են վանյան բեկոաշրերում հիշատակված Urtehini (Ուրտեխիհնի) անվանը՝ առանց, սակայն, խոշանալու իմաստաբանական մանրամասների մեջ<sup>10</sup>: Նախորդ գլուխներում կատարված ստուգաբանական վերականգնումները հնարավորություն են տալիս Ուրտեխիհնի տեղանունը կարդալ հայերեն՝ ուր «ջուր»: Ին «շատ» և եխ «ջուր»:

<sup>7</sup> ՀՀՕՏԲ, հտ. 2, էջ 420:

<sup>8</sup> ՀՀՕՏԲ, հտ. 2, էջ 845:

<sup>9</sup> Աճդ, էջ 864:

<sup>10</sup> ՀՀՕՏԲ, հտ. 1, էջ 506:

ի դեպ, բացառված չէ, որ Ուրտեխիների անվանումը բաղադրությունն ենթարկվել էր \*ուր-տեղի «ջրի տեղ» տիպի մի կազմության հետ: Սրանով էլ պետք է բացատրել Ուրտեխիների ձևի առկայությունը առավել սպասելի \*Ուրտախիների տարբերակի փոխարեն: Այս վերլուծությամբ վանյան Ուրտեխիների անվանումը բաղադրիչը նույնանում է հայ. յուղ և ուրդ բառերի հետ, իսկ եխ-ը կցվում է հայ. ախ «ջուր» հոմանիշին:

Հայտնի է, որ Մեծ Զար գետի Դիալա վտակը հնում կոչվելիս է եղել Տուրեանո<sup>11</sup>: Այս անվանումը ճշտիվ համապատասխանում է հայկական բոռնատ կազմությանը՝ բոռ «թաց» (<յ-ուր-դի) և -ատ «ուճեցող» (հմմտ. փշատ, հաստ-ատ, բաց-ատ և այլն): Այսինքն՝ Ուրտեխիների և Տուրեանո անվանումներն իրար հետ կապված են դրափոխության օրենքով՝ ուրդ-տուր: Ուրտեխիների և Տուրեանո անուններից անբաժանելի է նաև Ատուրգինի (Aturgini) տեղանունը: Սա մեկն է նախրիի 23 երկրներից, որոնք գրավել է Ասորեստանի Քիզլաթպալասար Առաջին թագավորը (մ. թ. ա. 12—11-րդ դդ.), իմաստն ու տեղորոշումը՝ անհայտ<sup>12</sup>: Մեր կարծիքով, Ատուրգինի անվանումը բաղկացած է առուր և գինի բաղադրիչներից. առաջինը մեզ ծանոթ թուր «շատ ջուր» տարրն է, իսկ երկրորդը կարող է կցվել հայ. գին (սեռ. գինն, գինի) «արժեք» բառին, որի նախնական իմաստն եղել է պարզապես «շափ, մեծություն» (հմմտ. ահագին, մեծագին և այլն): Ամենայն հավանականությամբ, Ատուրգինի անվանումը պահպանվել է հայկական Քուրկունիս (Տուրկունիս) գյուղանվան մեջ: Բացի արտաքին նմանությունից, այս համեմատության օգտին է խոսում այն փաստը, որ հայկական Քուրկունիս գյուղը գտնվում է Վանի նահանգում, Մեծ Զար գետի մոտակայքում<sup>13</sup>, ուստի միանգամայն հնարավոր է, որ Քուրկունիս, Ատուրգինի և Տուրեանո անվանումները հնում վերաբերելիս լինեին հենց Մեծ Զար գետին, մանավանդ, որ Զար գետանվան ար բաղադրիչը հիշեցնում է հնդեվրոպական \*ab (ap) «ջուր» արժատը:

Սեպագիր աղբյուրներում վկայված անվանումների այս շարքը լրացնում է Տարիունի գետանունը՝ Ուրմիա լճից արևմուտք: Տարիունի անվամբ մի բնակավայր էլ գտնվելիս է եղել Արաքսի վերին հոսանքի մոտակայքում<sup>14</sup>:

Բոլոր այս համեմատությունները հնարավորություն են տալիս հայկական Արցախ տեղանվան հնությունը հասցնել մինչև մ. թ. ա. 12—11-րդ դարերը: Հարկ է նշել, որ միաժամանակ, որ Հայկական լեռնաշխարհի գետանունների ձևավորումն ընթացել է շարունակաբար, և \*ար-դի, \*ուր-դի տարրերով կազմված ջրանունները աննշան փոփոխություններ կրելով հասել են մինչև մեր օրերը: Այդ են վկայում, մասնավորապես, Քարախտ (Ճորոխի ավազանում), Քարքառ, Քարմաշ (Արաքսի աջ վտակ Կոտուրի ավազանում), Քորթում (Ճորոխի ավազանում), Քուրյան (Արաքսի ավազանում), Քրաքի (Ուրմիա լճի ավազանում), Քրդին (Արցախում, Կուրի ավազանում) գետանունները<sup>15</sup>: Սրանք պահպանել են \*ար-դի, \*ուր-դի կազմությունների դրափոխված ձևերը՝ արդ > քար և ուրդ > քուր: Հայկական գետանուններից մի քանիսն էլ ձևավորվել են \*արդ(ի), \*ուրդ(ի) «շատ ջուր» բաղադրիչների քրմայնացված տարբերակների դրափոխությունից՝ \*արդ(ի) > \*արձ(ի) > \*ժար(ի), ինչպես որ տեսանք Արցախի Սար գավառանվան ստուգաբանության ժամա-

<sup>11</sup> Г. А. Меликишвили, Урартские клинописные надписи, М., 1960, с. 443.

<sup>12</sup> ՀՀՏՏԲ, հտ. 1, էջ 374:

<sup>13</sup> Աճդ, հտ. 2, էջ 499:

<sup>14</sup> Н. В. Арутюнян, Бнаишвили, Ереван, 1970, 194.

<sup>15</sup> Օրինակները քաղված են ՀՀՏՏԲ-ի 2-րդ հատորից:



նակ: Վերջինիս հետ նույնն է Մարծած գետանունը Արաքսի ավազանում, որ հիշատակում է գերմանացի ճանապարհորդ Հ. Կոխը<sup>16</sup>:

Արցախ անվան հետ համեմատելիության տեսանկյունից հսկայական հետաքրքրություն է ներկայացնում հայկական Ճորոխ գետանունը, որը հայտնի է նաև Մորոխ զուգահեռ տարբերակով<sup>17</sup>: Եթե մեր որդեգրած դրափոխության մեթոդով փորձենք վերականգնել Մորոխ անվան նախնական կառուցվածքը, ապա կստանանք \*որձոխ ձևը, որը կլիներ Արծախ տեղանվան բացարձակ զուգահեռը: Ընդամենը Մորոխ գետանվան հին ձևը եղել է \*ործ-ախ (յ-ործ-ախ «հորդուն ջուր») և ախ արմատի ա-ն ո է դարձել առաջին վանկի ազդեցությամբ՝ որդ(ի)ախ > որձախ > որձոխ > ծորոխ: Այլ կերպ ասած, Մորոխ անվան համար վերականգնելի ործ-ոխ (յորդ-ախ) նախաձևը նույնն է վանյան բեհռագրերի Ուրդեխիճի անվան հետ, որը նաև Արցախ-ի հին ձևն է:

Իսկ այժմ դառնալով կրկին հնչյունական վերականգնումներին, ուզում ենք անդրադառնալ մի կարևոր հարցի կս:

Հայերենում գործում է րց(րծ) > շտ հնչյունափոխության օրենքը՝ մուրց > մուշտ, կուրծ > կուշտ և այլն: Արդ, այս օրինաչափության լույսով դիտարկելով Արցախ տեղանվան Արց բաղադրիչը, նկատում ենք, որ սրա հնչյունական զարգացման հաջորդ աստիճանը պետք է որ լիներ Աշտ՝ պահպանելով նախնական «շատ ջուր» (աւ-դի) իմաստը: Այս Աշտ- կազմությունն էլ մեզ ծանոթ կաղապարով դրափոխվելով կարող էր տալ շատ, որը հայերենում ունի «առատ» իմաստը: Այսինքն՝ հայ. շատ «առատ» բառի նախնական նըշանակումը եղել է ոչ թե «առատ», այլ պարզապես՝ «առատ ջուր»: Այս վերլուծության հավաստիության օգտին է խոսում նաև շատ բառի շուտ ձայնդարձը՝ «կանուխ, վաղ, արագ» իմաստով: Հայ. շատ բառի օրինակով վերականգնելով շուտ ձայնդարձի զարգացման ճանապարհը, կստանանք հետևյալ պատկերը. շուտ < ուշտ < ուրց < ուրտ (դ) < ուր-դի (տի) «շատ ջուր»: Այս շղթայից ուշտ-ը պահպանվել է հայ. շտապել բառում (ուշտ-ապ-ել), ուրց-ը ուրց-ել «ցատկել» բայն է, իսկ ուրտ-ը յորդ «առատահոս» բառի խուլ տ-ով տարատեսակն է: Նման բարդ հնչյունափոխություններն, անշուշտ, հարստացրել են հայերենի բառապաշարը՝ նպաստելով, բնականաբար, նաև գետային ծագում ունեցող տեղանունների ցանցի ընդարձակմանը: Այս վերականգնումներից հետո արդեն պարզ է դառնում հայկական շատ տեղանունների ծագումն ու նախնական իմաստը: Հայկական հոշակավոր Շատախ տեղանունն, օրինակ, կարող է բացատրվել իբրև «ջրառատ» (շատ-ախ)՝ անցած լինելով \*արդի-ախ > արց-ախ > աշտ-ախ միջանկյալ փուլերով և ինչ-որ ժամանակ նույնանալով Արցախ տեղանվան հետ: Այլ կերպ ասած, Արցախ անվանումը \*արդի-ախ «շատ ջուր» նախաձևի և Շատախ տեղանվան միջև ընկած օղակներից մեկն է:

Այսպիսով, վերը բերված փաստերը ցույց են տալիս, որ Արցախ անվանումն առանձնակի չի կանգնած, այլ կազմում է Հայկական լեռնաշխարհի հնագույն տեղանվանական համակարգի կարևոր բաղկացուցիչ մասը: Ընդամենը հայկական աւ «ջուր» և -դի «շատ» բաղադրիչներով կազմված գետանունները լայնորեն տարածված են Հայկական լեռնաշխարհում՝ արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ՝ իրենց հնությունը հասնելով առնվազն մ. թ. ա. 12--11-րդ դարերը: Սա կս վկայությունն է այն բանի, որ դեռ վաղընչական ժամանակներից Հայկական լեռնաշխարհը բնակեցված է եղել միալեզու ցեղերով՝ հայերով:

<sup>16</sup>—<sup>17</sup> ՀՀՕՏԲ, Բ. 2, 845, էջ 864:

4. ԱՐՑԱԽ ԱՆՎԱՆ ՄՏՈՒԳԱՐԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱՍԿ-ԻՍՊԱՆԱԿԱՆ ՀԱՅՆՑԱԿՆՏԸ

Մինչ այժմ դիտարկված փաստերը վերաբերում էին բացառապես Հայկական լեռնաշխարհին և հայոց լեզվին, ուստի միանգամայն անհավանական կարող է թվալ, որ դրանք գրեթե բացարձակ նույնականությամբ պահպանված լինեն մեկ այլ տարածքում ու մեկ այլ լեզվում, առավել ևս՝ Հայաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու ընկած Իսպանիայում: Վերը բերված ստուգարանական վերականգնումների հավաստիության օգտին են խոսում ինչպես բասկերեն լեզվի տվյալները, այնպես էլ Պիրենեյան թերակղզու հնագույն տեղանունները: Ներկայացնենք սրանք առանձին-առանձին:

ա) Լեզվաբանական տվյալներ

Բասկերենում «չուր» իմաստն արտահայտվում է **ur** բառով, որը նույնն է հնդեվրոպական \**ur* հոմանիշի հետ: Բասկերենն ունի նաև **ur** «չուր» արմատի **ar** ձայնդարձը՝ *jario* «հոսել», որը հայ. **յար-ել** «կողքը դնել, կցել» բառի բացարձակ զուգահեռն է: Ուշագրավ է, որ բասկ. *jario* «հոսել» բայն ունի նաև **erion** տարբերակը, որը **ur**, **ar** «չուր» արմատների վերին ձայնդարձն է:

Բասկերեն **ur**, **ar**, **er** «չուր» արմատներն իրենց հետագա զարգացման ընթացքում կրկնում են հայ. **ուր**, **ար**, **եր** հոմանիշների անցած ճանապարհը՝ ծնունդ տալով կատարյալ զուգահեռ շարքերի:

Այսպես, բասկ. **arro** «գետի հունը» բառը հայ. **առու** բառի հնչյունական և իմաստային բացարձակ զուգահեռն է և վերջինիս նման պետք է որ ծագած լինի \***ar** «չուր» արմատի կրկնավոր ձևից՝ **ar-ar-o** > **arro** «չուր-չուր ունեցող»: Նույնը վերաբերում է նաև բասկ. **urru** «թանձր, առատ» բառին, որն էլ իր հերթին. հայ. **ուր** (ուռիլ) արմատի բացարձակ զուգահեռն է և գալիս է \***ur-ur-u** «չուր-չուր ունեցող» կազմությունից: Այս վերլուծությամբ հայերեն **առատ** և **ուրած** հոմանիշներին ճշտվել համապատասխանում են բասկերեն **arras** «լրիվ, ամբողջ» և **urru** «թանձր, առատ» զուգահեռները:

Պատկերը շի փոխվի, եթե փորձենք հետևել \***er** ձայնդարձի զարգացմանը: Բասկերենում **er** «չուր» արմատը հանդես է գալիս բազմաթիվ բառերում, որոնք այս կամ այն շափով կապված են «չուր» իմաստի հետ, ինչպես օրինակ **erion** «հոսել», **erori** «ընկնել» (իմա՛ «թափվել»), **erras** «լրիվ, ամբողջ», **erreka** «գետ», **erre** «վառել» և այլն: Սրանցից ուշագրավ է հատկապես **erori** «ընկնել» և **erre** «վառել» զույգը, որը հիշեցնում է հայ. **եր-եր-ալ** > **եր-ալ** անցումը: Այս համեմատությունից հետևում է, որ բասկ. **erre** «վառել» բայի նախնական իմաստը եղել է «եռացնել, եփել»: Նման վարկածի օգտին է խոսում նաև բասկ. **l-urrun** «գոլորշի» բառը, որը պարունակում է պարզական **ur** «չուր» արմատի կրկնավոր ձևը:

Հայկական **-տի** (-դի) «շատ» և **տի-** «մեծ» մասնիկները ևս բասկերենում ունեն իրենց զուգահեռները՝ **-te** և **-ti**: Առաջինը շատ գործածական վերջածանց է և ունի «առատություն» իմաստը՝ **urte** «չրհեղեղ», 2. «տարի» (ur «չուր» և **-te** «առատ»), **elurte** «ձնաբուր» (**elur** «ձյուն» և **-te** «առատ») և այլն: Բասկ. **-ti** վերջածանցն արտահայտում է «ամբողջություն» իմաստը և շատ տարածված է հատկապես տեղանուններում՝ **arizti** «կաղնուտ» (**aritz** «կաղնի» և **-ti** «ամբողջություն, առատություն»), **sagasti** «խնձորուտ» (**sagar** «խնձոր» և **-ti** «ամբողջություն») և այլն<sup>18</sup>:

Արդ, բասկերենում **ur** «չուր» և **-te** «առատ» բաղադրիչների միաձուլու-

<sup>18</sup> P. Mujika, Afijos vascos. p. 66:

մից ծագել է *urte* բառը, որն ունի «ջրհեղեղ» (իմա՝ «առատ ջուր») և «տարի» իմաստները: Այս վերջին նշանակումը շատ կարևոր է մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից, քանի որ, ինչպես ցույց է տվել Յոզեֆ Կարստը, բասկ. *urte* և հայ. տարի հոմանիշներն իրարից տարբերվում են միայն դրափոխությամբ և ձայնդարձի աստիճանով, իսկ բասկ. *urte*-ի հայերեն բացարձակ զուգահեռն է յորդ-ել ձևը<sup>19</sup>:

Հայերենի նման բասկ. *urte* (*ur-te* «առատ ջուր») «ջրհեղեղ» բառը գիտակցվել է իբրև մեկ ամբողջություն և վերջավանկի անկումով ստացել \**urt* կերպարանքը: Սրա դրափոխությունից սպասելի էր \**tur* տիպի մի կազմություն՝ *urt > tur* անցմամբ՝ դուրս չգալով «առատ ջուր» իմաստային դաշտից: Այն, որ բասկ. *urte* բառը ենթարկվել է դրափոխության և ձայնավոր-բաղաձայն-բաղաձայն կառուցվածքից ա՛նցել բաղաձայն-ձայնավոր-բաղաձայն կառուցվածքի, հաստատվում է բասկ. *iturri* «աղբյուր» բառի առկայությամբ: Ընդամին հայերենի հետ զուգահեռականությունը գրեթե կատարյալ է, ինչպես որ հայ. յորդ-ել բառն է վերածվել բոր-ել-ի, այնպես էլ բասկ. *urte* «ջրհեղեղ» հոմանիշն է դրափոխվել և դարձել *iturri* (*i-tur-i*) «աղբյուր» (իմա՝ «առատ ջուր»): Ասենք, որ բասկ. *iturri* «աղբյուր» բառն ունի նաև *ithurri* (հնչում է իթուրի) տարբերակը, որը հայ. բուր-ջ և բոս «թաց» (իմա՝ «ջրոտ, առատ ջուր ունեցող») հոմանիշների կրկնակն է:

Հնդեվրոպական \**aqw* «ջուր» (հայ. ախ) արմատի բասկյան համարժեքն է *-aga* վերջածանցը՝ «ամբողջություն, առատություն» իմաստը և պահպանել է բազմաթիվ տեղանուններում՝ *Madariaga* «տանձուտ» (*madari* «տանձ և *-aga* «առատ»), *Gorostiaga* «փշարմավուտ» (*gorozti* «փշարմավ» և *-aga* «առատ») և այլն<sup>20</sup>:

Այսպիսով, ինչպես երևաց բերված համեմատություններից, հայկական Արցախ տեղանվան երեք բաղադրիչներն էլ (ար «ջուր», -դի «շատ», ախ «ջուր») նույնությամբ կրկնված գտնում ենք նաև բասկերեն լեզվում՝ ներառյալ յ-որդ արմատական տարրի դրափոխված տարբերակը: Լեզվաբանությունը չի ճանաչում նմանօրինակ զանգվածային և միասնական համակարգ կազմող պատահական ընդհանրություններ, ուստի ակնհայտ է, որ նշված զուգահեռների հիմքում կարող է ընկած լինել միմիայն ծագումնաբանական ընդհանրությունը:

բ) Տեղանվանական զուգահեռներ

Պիրենեյան թերակղզու հնագույն (նախալատինյան) տեղանվանական համակարգում շատ մեծ դեր են խաղում *Dur* (*Tur*) կամ *Adur* (*Atur*) արմատական տարրերը: Սրանցով կազմված տեղանունները Իսպանիայում համատարած բնույթ են կրում, ինչպես օրինակ՝ *Iturissa*, *Sauria* (*Turia*), *Usturia* (*Aturia*), *Asturias* և այլն: Խոսելով *Tur* (*Dur*) բաղադրիչի ծագման հնարավոր տարբերակների մասին, բասկ գիտնական, ակադ. Բեռնարդո Էստոնես Լասան տալիս է հետևյալ պարզաբանումը. «*-dur*, *-tur* արմատով կազմված այս անվանումները Հումբոլդտը կապել է բասկ. *iturri* «աղբյուր» բառին, որի «փափուկ» տարբերակները պահպանվել են *Iturissa* և *Itulissa* տեղանուններում: *Durance-Dulance* զույգը ներկայացնում է *r > l* անցումը: Փորձ է արվել նաև նշված անվանումները բացատրել բասկ. *i-zur-i* «թափել» և *ur* «ջուր» բառերով:

Սակայն տվյալ դեպքում մեզ հետաքրքրող հարցն այն է, թե որն է եղել

<sup>19</sup> Յ. Կարստ, Եզվ. աշխ., էջ 10:

<sup>20</sup> P. Mujika, Afijos vascos, p. 7,

այն ժողովրդի զբաղեցրած տարածքը, որի լեզվին է պատկանել Aturi բառը: Դրանք իբերները չեն, քանի որ այդ անվան տարածման ոլորտներում նրանք իբերներ չեն եղել: Նույն պատճառներով պետք է բացառվեն նաև կելտական, լիգուրական կամ իլլիրական վարկածները:

Նավառայում, ըստ Անտոնիոսի ուղեցույցի, կար մի Iturissa հենց բասկյան Պիրենեյների կենտրոնում, որի հետ համեմատվել է ներկայումս շատ տարածված Ituriza-ն, որին շատ նման են Ռիոխայում հանդիպող Iturza և անգամ Turza, Turzia ձևերը<sup>21</sup>:

Այս անվանումների հայկական տեսքն այնքան ակնհայտ է, որ կարող է անգամ շփոթության տեղիք տալ: Այսպես, Turzia, Turza տեղանունները կրկնում են հայ. քուրջ բառի կառուցվածքը և կարող են ընթերցվել իբրև ֆուրջիա, Թուրջա (բասկ. z— հայ. ջ համապատասխանություն: համար հմմտ. zart «կոտրել, կտրել» — հայ. ջարդ-ել, բասկ. zoz-ko «մեծ» — հայ. ջոջ, բասկ. zain «հոգ, խնամք, հսկում» — հայ. ջան-ալ և այլն), իսկ Aturi ելակետային բաղադրիչն այլ բան չէ, եթե ոչ հայկական Ատուրգինի (նաև Տուրկունիս) գետանունը, որը մենք ստուգաբանեցինք որպես «առատ ջուր ունեցող»: Ի դեպ, Ատուրգինի անվան գին-ն(ի) «չափ, գին» բաղադրիչը նույնպես գոյություն ունի բասկերենում՝ gino «չափ», ուստի հայկական Ատուրգինի գետանվան բասկյան համարժեքը կլինեն \*Iturrigino տիպի մի ձև՝ հենց «մեծ աղբյուր» իմաստով, որը ոչնչով չէր աղարտի Իսպանիայի քարտեզը:

Բերված բասկ-իսպանական տեղանուններում tur (dur) բաղադրիչը հանդես է գալիս դրափոխված՝ բաղաձայն-ձայնավոր-բաղաձայն կառուցվածքով: Սակայն Պիրենեյան թերակղզում քիչ չեն նաև այնպիսի տեղանունները, որոնք պահպանել են նախնական ձայնավոր-բաղաձայն-բաղաձայն կազմությունը: Սրանցից նշենք առաջին հերթին բասկյան Artajo և Artajona տեղանունները նավառայում<sup>22</sup>, ընդ որում, բասկ. j հնչյունը որոշ բարբառներում հնչում է հայ. խ-ի նման, ուստի Artajo և Artajona անվանումները հայերեն կարող են տառադարձվել Արտախո և Արտախոնա՝ դառնալով մեր Արցախ (նաև Արդախ) անվան բացարձակ զուգահեռները:

Բայց սա դեռ բոլորը չէ: Բասկյան Artajona տեղանունը վերլուծելով դրափոխության տեսանկյունից, նկատում եմք, որ սրա զարգացման հաջորդ՝ դրափոխված տարբերակը պետք է լինեն \*Tarajona: Վերջինս Պիրենեյան թերակղզում շատ հայտնի Տարոգոնա (Tarragona) տեղանունն է: 16-րդ դարի բասկ պատմաբան Անդրես դե Պոսան տալիս է Տարոգոնա անվան հետևյալ բացատրությունը. «Տարոգոնա — հնագույն քաղաք՝ հիմնված հայերի կողմից. իրենց լեզվով նշանակում է «հովիվների համայնք»<sup>23</sup>: Այս իմաստն, անշուշտ, ժողովրդական ստուգաբանության արդյունք է, սակայն կարևորն այն է, որ բասկյան միջավայրում պահպանվել է Տարոգոնա անվան հայկական ծագման վարկածը:

Բացի Artajo և Artajona տեղանուններից, հայկական Արցախ անվանը համահունչ է նաև բասկյան Urtiaga տեղանունը, որը միաժամանակ շատ տարածված ազգանուն է: Սրա կազմությունն արդեն ինքնին պարզ է վերջ բերված նկատառումների լույսով՝ ur «ջուր», -ti «առատ» և -aga «ջուր», 2. «շատ, առատ»: Ընդամին, բասկ. Urtiaga անվանումը գրեթե նույնությամբ պահպանել է վանյան բեռնագրերի Ուրդեխ(իճի) տեղանվան կառուցվածքը, որից ծագել է Արցախ (<արձախ) քմայնացված ձևը:

<sup>21</sup> B. Estornés Lasa, Origenes de los vascos, t. 3, p. 280:

<sup>22</sup> Diccionario Histórico-geográfico del País Vasco, t. 1, p. 109.

<sup>23</sup> De La antigua lengua, poblaciones y comarcas de España, p. 32.

Հայ-բասկյան այս բացարձակ զուգահեռները բացատրվում են բասկերի հայկական ծագման վարկածով, որը որոշակի արդյունավետությամբ գիտական մշակման է ենթարկվել հատկապես բասկ-իսպանական բանասիրության մեջ: Եվ հայկական Արցախ տեղանունը միայն մի կաթիլ է հայ-բասկյան տարաբնույթ զուգահեռների վիթխարի համակարգում: Անշուշտ, կարևոր է պարզել, թե հայկական ցեղային-լեզվական տարրը ե՞րբ է ներթափանցել Պիրենեյան թերակղզի: Այս առումով մենք առայժմ կարող ենք հենվել միայն մարդաբանական տվյալների վրա, որոնց տված ժամանակագրական շրջանակները համեմատաբար հավաստի են: Նշանավոր գիտնական Օ. Մենգինը խոսելով Պիրենեյան թերակղզու հնագույն շրջանի մշակութաբանական և մարդաբանական առանձնահատկությունների մասին, եկել է հետևյալ եզրակացությունը. «Մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կեսերին արևելյան Միջերկրականից Իսպանիա են գալիս ցեղեր, որոնք խառնվելով տեղի քամյան բնակչությանը, բերում են մշակույթի նոր մակարդակ՝ կապված մետաղագործության և մեգալիթյան ճարտարապետության զարգացման հետ...»

Առկա է աֆրիկյան ծագումով հնագույն բնակչության մշակույթի և ասիական վերաբնակիչների մշակույթի խառնուրդ՝ վերջիններիս գերակշռությամբ, որոնք բերում են նաև իրենց լեզուն: Մարդաբանական առումով ասիացիները Իսպանիա են բերում կարճագլուխ (բրախիցեֆալ) արմենոիդներին: Քամյան-ասիական այս խառնուրդից, ասիական տարրի գերակշռությամբ, ձևավորվում է այն նախաիբերական ցեղային կազմը, որը հաստատվում է Իսպանիայի շրջանների մեծ մասում»<sup>24</sup>:

Մարդաբանական այս տվյալները ցույց են տալիս, որ հայկական տարրը Պիրենեյան թերակղզի է ներթափանցել մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կեսերին: Սրանից ինքնաբերաբար բխում է այն հետևությունը, որ Արցախ տեղանունը Հայկական լեռնաշխարհում գոյություն ունի այդ ժամանակներից դեռ շատ ու շատ առաջ, հավանաբար, հայոց լեզվի ձևավորման վաղ շրջանում: Հայկական Արցախ տեղանունը կազմել է Հայկական լեռնաշխարհի միասնական տեղանվանական համակարգի մի բաղկացուցիչ մասը և այդ համակարգի զանազան այլ տարրերի հետ մեկտեղ, իբրև «առատաշուր» իմաստով պատրաստի անվանում, տեղափոխվել Պիրենեյան թերակղզի:

Իսպանացի գիտնական, ակադ. Ամադոր դե Լոս Ռիոսը խոսելով հայ-բասկյան տեղանվանական զուգահեռների մասին, գրում է, որ Նավառայի շատ բնակավայրեր «հիշեցնում են հայկական անուններ»: Սրանց թվում Լոս Ռիոսը հիշատակում է նաև Նավառայան Ուրդիայն (Urdiain), Ուրդախ (Urdax), Իտուրեն (Ituren) և Իտուրգոյեն (Iturgoyen) տեղանունները<sup>25</sup>: Յավոս, իսպանացի գիտնականը չի խորանում այս անունների իմաստաբանական մանրամասների մեջ և չի հասնում դրանց նախնական նշանակմանը, սակայն ակնհայտ է, որ նրա կոահումը միանգամայն ճիշտ է եղել, որը հաստատվում է վերը շարադրված փաստերի ողջ տրամաբանությամբ:

**В. Г. САРКИСЯН**— Армянский топоним Арцах (опыт комплексной этимологии).— В статье анализируется происхождение известного армянского топонима Арцах. Работа состоит из четырех частей.

1. Фонетическая структура и исконное значение топонима Арцах
2. Связь топонима Арцах с физическими особенностями местности
3. Топоним Арцах и система топонимики Армянского нагорья

<sup>24</sup> В. Estornés Lasa, op. cit. t. 4, p. 343—44.

<sup>25</sup> Monumento y tesoro de la lengua ibérica, B., 1920, p. 48.

#### 4. Баскско-испанский аспект этимологии топонима Арцах.

На основе всестороннего анализа фонетической структуры топонима Арцах автор приходит к выводу, что из всех засвидетельствованных форм топонима Арцах древнейшим является вариант Ардак, который состоит из трех компонентов: ар— «вода» (ср. арм. ару— «ручей», араг— «быстро», арат— «обильно»), -ди «много» (древний формант множ. числа, ср. манк-ти— «дети», цак-ти— «дырки»), ах— «вода» (и.-е. \*aqw «вода»). Это означает, что исконное значение топонима Арцах (<Ардах) было «полноводный, имеющий много воды».

Толкование топонима Арцах подтверждается физическими особенностями местности, так как характерной чертой Арцаха является обилие рек, в частности притоков Куры и разных источников. Автор предполагает, что в основе топонима Арцах (<Арцах) лежит гидроним Тартар, который представляет собой редупликацию коренного элемента тар. Этот сегмент очевидно является результатом метатезы компонента арди (<ар-ди «много воды»): ард(и)>тар>Тар-тар. Данная этимология подтверждается тем, что на территории Арцаха существуют и палатализованные варианты гидронима Тартар. В этом отношении интересны гидроним Ծար (на верхнем течении Тартара) и гидроним Մար (один из притоков Аракса).

Топоним Арцах тесно связан с системой древней топонимики Армянского нагорья. Еще в урартских клинописных надписях засвидетельствован вариант Уртехэ (Уртехини), который часто отождествляется с Арцах-ом. По своей фонетической структуре ближе всех к топониму Арцах стоит гидроним Чорох (Չորախ), который известен также в форме Цорох (Մարախ), для которого автор восстанавливает форму \*Орцох (\*Որցախ), предполагая метатезу коренного элемента. Этот метод реконструкции позволяет автору отождествить гидронимы Тартар (<Тар-тар) Чорох и Цор (Մար).

Все эти элементы сопоставляются с данными баскского языка и системой древней топонимики Испании. Армянские сегменты ар «вода», -ди «много» и ах «вода» автором сопоставляются с баскскими ар «вода», -ди «большой», 2. «множество» и ага «множество».

В Испании сохранилось большое количество топонимов, сформированных из вышеуказанных элементов: Артахо, Артахона, Урдаха, Уртиага и др., которые повторяют фонетическую структуру армянского Арцах-а.